

# ՄԵԾ-ՂԱՐԱՔԻԼԻԱՍՅԻ ՆԵՐԿԱՅ ԴՐՈՒԹԻՒՆԸ

Ա. ՈՐՀԵՂԵԱՆԻ

## I

Գուգարաց աշխարհի հարաւային անկիւնում Ալրարատին կից՝ գոն-  
ւում է 37 գիւղից բաղկացած Փամբակ գաւառակը՝ (հաւանօրէն Տաշիրի  
մի մասը), որի նշանաւոր աւանն է ներկայումս Մեծ-Ղարաքիլիսան,  
լեռներով շրջապատւած, ընդարձակ ձորամէջ դաշտավայրի վրա (ХОТЮ-  
ВЕНА), հարաւից հիւսիս աննկատ կորութեամբ:

Հալոյ Ալլիշանի կազմած քարտիզում (Ալրարատ) աղ մասին նկատելի  
են անճշդութիւններ. Ղարաքիլիսան Ծաղկաձորումն է դրւած, ալն ինչ  
աղ գաւառը ահագին լեռներով է բաժանւում Փամբակից. աղպէս և  
Փամբակի մի քանի գիւղեր ոչ Փամբակում, այլ Լոռի և ալ տեղեր պէտք  
է որոնել:

Գիւղի հիւսիսային կողմից անցնում է Փամբակ գետը. արեւելքից  
Վանաձորի և Համգաշիման գետակների խառնուրդը. վերջինս Աղստեի  
գետի մի ճիւղն է կազմում, որ Վոսկրեսենովկա մական Գիւղից հարաւ,  
անտառի մէջ անլիշատակ ժամանակներից, արհեստական պատնէշով եր-  
կու մասի է բաժանւած, միմեանց հակադիր՝ Դիլիջանի և Համգաշիմանի  
ձորերը ուղղելու համար: Աղ բոլոր ջրերը Գիւղի հիւսիս-արեւելքում միա-  
խառնելով Դեբտ գետի գլխաւոր ճիւղն են կազմում: Արեւելքից արե-  
ւոտք ձգւող Փամբակեան լեռնաշղթայի գեղեցկագիր անտառը, որ Հա-  
մամիլի Գիւղին (20 վ. Ղարաքիլիսից արեւմուտք) չհասած վերջանում է  
հետզհետէ թփերի փոխարկելով, Գիւղից վերստաչափ միայն հեռի՝ տա-  
րածւում է հարաւային կողմով:

Անտառը լի է բազմատեսակ ծառերով և թփերով. կաղնի, աճարի,  
լորենի, բոխի, հացի, թեղի, թեղքի, տանձենի, խնձորենի, տխլքի, մո-  
րենի, հաղարջենի և այլն: Մալմէխ հրաբխական սարը, կոճուսաձև, ձա-  
գարանման, խճապատ գագաթով, մօտաւորապէս 11 հազար ֆ. բարձրու-

Թեամբ, իշխում է ամբողջ լեռնաշղթայի վրա, որի լանջերն ու ստորոտները հիւթալից դալար խոտերով և կանաչազարդ երվներանդ ծաղիկներով զարդարւած, նկարչական վալրեր են ներկալացնում, ճատալու անւանեալ ոչ ալնչափ ընդարձակ դաշտալալրը գիւղի արեւոտան մասն է կաղմում, որի միջով անցնում է Ալէքսանդրապոլեան խճուղին: Գիւղը ձգւում է հարաւից հիւսիս մօտաւորապէս  $1\frac{1}{2}$  վերստ երկարութեամբ, արեւելքից արեւմուտք  $\frac{3}{4}$  վ. լայնութեամբ. հետեապէս առ առաւելն 120 դեսեատին կարելի է ընդունել գիւղի տարածութիւնը պարտիզներով հանդերձ, Վարելանոցի տարածութիւնն է 1214 դեսեատին 2000 ք. սափ. արօտատեղինը 2243 դեսեատին 1725 ք. սափէն, Վերջին երեք տասնեակ տարիներում ժողովրդի թիւը գրեթէ կրկնապատկել է, ընդ նմին և տէրունական հողալին հարկը <sup>1)</sup>, առանց մաղաչափ անգամ հող աւելանալու. և թէ գիւղացիք պատշաճաւոր կերպով պաշտպանել գիւտեան իրանց իրաւունքները, հնարաւորութիւն կալ հողաբաժինը փոքր ինչ աւելացնել. հակառակ դէպքում գէթ օրէնքին համաձայն աղատել կարող էին աւելորդ հողահարկից:

Կլիման առողջարար, կազդուրիչ և բարեխառն է. հաղադէպ են ցրտաշունչ ձմեռներ և տօթաղին ամառներ. նախկին տարիների դարնան և աշնան անձրեակին եղանակները զգալապէս պակասել են վերջին տարիներում: Ընդհանրապէս վերցրած ալնպէս են միախառնւած տարալ եղանակները, որ դժւարին է լինում որոշել մէկի. սկիզբը միւսի վերջը. մինչև իսկ ամառը լաճախ դարնան անուշահոտութեամբ է բուրում: Հարկ չկալ քիմիական վերլուծութեան ենթարկել ջրերի առողջարար չատկութիւնը ապացուցանելու համար. Գիւղի շրջակալքը առհասարակ և առաւելուպէս Վանաձորը բնութեան հրաշալիքներից մէկն է. կարկաչահոս, արծաթափալ գետակներ ու վտակներ բիւրեղանման փոքրիկ ջրընկեցներով և կամբախալթ ձկներով, պարզ ու վճիտ սառնորակ աղբիւրներ, վաղորդանց օդով պարարտացած կանաչազարդ ձորակներ, երվներանդ ծաղիկների անուշահոտ բուրմունքներով լի հովիտներ, տաւերախիտ անտառ, հովասուն մեղմիկ զեփիւռ, բազմազան թռչունների քաղցրահնչիւմ երգ ու պար, ալդ բոլորը դրականապէս կախարդում են մարդու սիրտն ու հոգին և հիացումն պատճառում առաջին անգամ հանդիպելով քնութեան ալդ հրաշագեղ ստեղծագործութիւններին:

Փամբակը, ըստ չատկութեան հողի, երկու՝ միմեանցից տարբեր՝ հա-

<sup>1)</sup> Հող չի աւելացել, բալց, այս երեսուն տարիներում, բերքերի գները բարձրացել են, դրամի արժէքը ընկել է՝ դրամի աւելի մեծ առատութեան պատճառով և ալն. Ալդ ամենը նշանակութիւն ունի հարկերի չափի համար:



ւասար մասերի է բաժանւում: Շիրակին կից անտառադուրկ արեմտեան մասը, 17 գիւղերով, Համալիից սկսած մինչև Աղբուլաղ գիւղը աւելի քան 40 վերստ տարածութեամբ, խճուղու աջ ու ձախ կողմերում գտնւած դաշտերը լալտնի են իրանց պաղաքերութեամբ: Լիթէ տարին երաշտ չէ և բնութեան անսպասելի պատահարներէ՝ կարկուտից, մկների արշաւան. քից, հեղեղներից և այլն ազատ է, երկրագործը կատարեալ իրաւունք ունի առատ հունձի օգտակը, որ իր պիտութիւնը հողալուց լետու, զգալի քանակութեամբ ևս կարող է 'ի վաճառ հանել: Ինչպէս անցեալ՝ աճեալէս և այս տարի, նա այս բաղդից զրկւած է: Արեւելեան անտառալիւն մասը, 20 գիւղերով, գրեթէ նոյն մեծութեամբ, որին պատկանում է և Ղարաքիլիսան, ընդհակառակ ժլատ է երկրագործի աշխատանքը վարձատրելու մէջ, մինչև իսկ ամենալաջող տարին: Այդ մասի ազգաբնակիւթիւնը, Նա. մանաւանդ Ղարաքիլիսան, մշտապէս ստիպւած է հաց մուրալ Շիրակից և Արարանից. բայց որովհետեւ Շարալի երբեմն հացալից աշխարհը վերջին տարիներում հրաժարւում է անգամ իր հարադատ զաւակներին կերակրելուց, ինքն ըստ ինքեան հասկանալի է մեր ժողովրդի կրիտիկական դրու. թիւնը: Ժողովրդական աղէտը կատարեալ դարձնելու համար, այս տարի կարկուտը ևս բարեհաճեց իր ահուկի դէմքը ցուց տալ մեզ հէնց ալն լու. պէին, երբ գիւղացին գերանդին սրած պատրաստւում էր իր աշխատութեան պտուղը քաղել. և աղպէս, միանգամից ոչնչացրեց թշառ գիւղացու բոլոր չոփերը: Ոչ աճեալի Ղարաքիլիսան, որչափ Ղշաղ, Բեզաղալ, Սարմուշալի գիւղերը հաագին նիւթական հարւած կրեցին. հինգ լուպէ. ից լետու ալ ևս ոչինչ չմնաց արտերում, բացի ալստեղ ու աչտեղ ցըց. ւած ծղնոտները <sup>1)</sup>: Վաղուց, շատ վաղուց էր որ կարկուտը մեր կողմերը ալցելութեան չէր եկած: Ղարաքիլիսան, առանց բնութեան ալք արհա. ւիրքի էլ արդէն ողորմելի էր. հասկերի մէջ հացահատիկներ սակաւ էին երեւում. շատերը՝ սերմն աճեալ ոտանալոն բաղդից զրկեցան. հասկերը լցւելու ժամանակ, մի անգամից անձրևները դադարեցին:

Փամբակի արեւելեան մասի դաշտերը թէև սևահող, բայց ամրապինդ և դժուարալար են. մեծ ուժ է պահանջում, մեծ ջանք պէտք է գործադրել նրան փափկացնելու համար. փոքր ինչ ուշացաւ անձրևը, արեգակի ազ. դեցութիւնից իսկույն կը ճաքճքի և աւելի կամրանալ. անձրևի առատու. թիւնը նույնպէս ոչինչ բարձր չի խոստանում. տեղ-տեղ էլ հողը ճահ.

<sup>1)</sup> Ժարջան Ղշաղեցիք, նկատելով որ կարկուտ տւած տեղերում հացահատիկները ցրւած են, իսկույն սկսեցին վարել, առանց սերմելու: Եւ նրանց չոփերը լիովին արդարացան. սեպտեմբերումն ենք և ալք դաշտերը դեղեցիկ կերպով կանաչել են: Ահա ինչ է նշանակում նոյն իսկ բնութեան տւած մեղաներից օգուտը:

ճալին է (Համգալիման): Հարկաւ ալս ամենը աննպաստ լատկութիւններ են հացաբոլսերի, առաւելապէս ցորենի անկութեան համար:

Միւս գիւղերի համեմատութեամբ Ղարաքիլիսան ամենաթշուառն է. շրջակա գիւղացիք գոնէ գիտեն ջան տալ, աղբել, ջրել, մաքրել, աշնանավար անել. ալն ինչ դարաքիլիսեցին անփութ է և անհոգ: Հողի մշակութեան մէջ կատարեալ նախաջրհեղեղեան սխտեմ է տրուամ. աշնանավարը պաս է, դարձանավարն էլ մի բան չէ. կարծես երեսպալի նման խաղալիս լինին. հողը պարարտացնելու կարելի և տարրական միջոցները գլխովին անտես են առնուամ. չի ջրուամ, ալն ինչ մի ալսպիսի ջրառատ երկրում փոքր աշխատանք կրելով և չնչին ծախսով ամբողջ դաշտերը գրեթէ ջրել կարելի է. ալդ իսկ պատճառով երկրագործի աշխատանքը ոչնչով չէ վարձատրուամ. մէկին 3—4 արդէն լաջող տարի պէտք է համարել. վերջին տարիներում դրանից էլ զուրկ են:

Ընդ սմին լաճալս, մանաւանդ անձրեակին տարիներում, ցորենի մի մասը «դե» կամ «գիթ» անւանեալ մուգ գորշագոյն հատիկների է փոխարկուամ, որ ցորենի մեծութիւն ունենալով՝ անհնարին է լինում բոլորովին մաքրել-գտել ցորենից. ալդ տեսակ հացը արեւցնոյ, թմրեցուցիչ, քնաբեր, գլխացաւ առաջացնող լատկութիւն ունի: Պատահել են դէպքեր որ գրեթէ «դե» ցանելով, ցորեն են ստացել. նշանակում է ինչպէս ցորենը «դեի», ալդպէս և «դեը» ցորենի փոխարկելու ընդունակութիւն ունի: Պէտք է լիշել որ վերջին տարիները առաւել երաշա լինելով, «դե» չի երեւում:

Երկրագործութեան անկումը մասամբ պէտք է բացատրել և նրանով, որ մեղանում հազիւ կը պատահէք երկու եղբայր միմեանց հետ մի լարիկ տակ ապրելիս. ալն ինչ երկրագործութիւնը բազմաթիւ աշխատող ձեռքեր, հաւաքական մեծ ուժ է պահանջում: Անցեալը՝ ներկայի նման չէր, երբ մեղանում գոլութիւն ունէին մեծ օջաղներ: Երկրագործը, իր ուժերը ջլատելով, Նիւթապէս իրան քալքաման է դատապարտում <sup>1)</sup>:

Բանջարանոցի արտադրութեանց մէջ ամենալն լաջողութեամբ կարելի է առաջ տանել գետնախնձորի և կաղամբի մշակութիւնը: Մառատուողներից առատութեամբ բուսնում են սալորների, կեռա սենի, խնձորե-

<sup>1)</sup> Մենք, ընդհակառակը, մի քանի շատ հիմնատր պատճառներ ունենք ցանկանալու որ ցալթմ տիրող հակական սովորութիւնը՝ որի համաձայն մի լարիկ տակ կենում են մի քանի ընտանիքաւոր եղբայրներ՝ թողնելի: Սա մի շատ նշանաւոր խնդիր է մեզ համար, որպէս զի մեր ասելիքը կարողանանք սպառել ալս տեղում. դա Նիւթ կը կազմի մի լոգաձիւ իսկ գալով ալն կէտին թէ երկրագործութեան մէջ շատ ձեռքերի կարտուութիւն կալ, մենք կը պատասխանենք թէ կան ալ միջոցներ իրար օգնելու:



նի, տանձներ, ծիրանի, թթենի. վերջին երկուսը հազադիւտ են Խըն-  
ձորենին ապագայ է խոտտանում. մի գրանքաւ ծանրութեամբ խնձորներ  
են լինում. արդէն սկսել են ամենուրեք պարտէզներում պատուաստել:  
Մասապտուղները ամենալն տարի նոյն առատութիւնը չեն խոտտանում.  
գլխի է պարենաբար մի տարի առատութիւն, իսկ հետեւեալ տարին կամ  
ոչինչ կամ աննշան: Պէտք է ենթադրել որ հողը, ուժասպառ լինելով, հո-  
գատարութիւն է պահանջում: Գաշտալին և անտառալին բազմազան բու-  
սեր, որոնց ժողովուրդը աւելի կամ պակաս չափով գործ է ածում թթու  
գրած, եփած, հում կամ կերակրի հետ, կարեւոր ենք համարում լիչել ալս-  
տեղ իրանց անուշներով.— շուշան, ղոխ, բոխ, դանձիլ, սինդրիկ, քեղ, բըլ-  
գըրխան, աւելուկ, փիփերթ, աղինջ, դանդուռ, թրթնջուկ, թեւուկ, կըծ-  
ուկ, լծկոտ, զիմել, բաղինջ, տղաբերուկ, պապոր, շաքարամա, խա-  
զառ և ակն:

Փամբակի ոչ մի գիւղ իր արօտատեղերով Ղարաքիլիսի հետ մրցել  
կարող չէ. նկարչական լեռները մշտապէս մինչ խոր աշուն ծածկած  
են հիւթալից դաւար խոտով: Ալթուն-թախտ անւանեալ բնդարձակ լեռ-  
նագաւոր և Մալմեյի լեռան լալնածաւալ ստորոտները բնութեան հրաշա-  
լիքներ են և բուսականութեամբ հարուստ. միշտ թանգ է գնահատում  
Ղարաքիլիսի անուշահոտ իւղը: Ալդպէս և առատ է խոտատեղերով: Փամ-  
բակի արեմտեան մասի և Շիրակի շատ գիւղերին Ղարաքիլիսան էր ա-  
ռաւելապէս խոտ մատակարարում անցեալ՝ ալս տարւանից աւելի՝ անլա-  
ջող տարին: Այս տարի ևս ահագին դեզեր են գրել, բաց ճրագով են  
որոնում գնողներին:

Պէտք է ենթադրել ուրեմն որ ժողովրդի պարագմանց մէջ առաջնա-  
կարգ տեղ կարող է բռնել անասնապահութիւնը: Ընդ նմին լաջողութեամբ  
կարելի է առաջ տանել, մի քանի տարրական գիտելիքներով, և մեղա-  
պահութիւնը, քանի որ սար ու ձոր, դաշտ ու հովիտ լի են բազմազան  
ծաղիկներով: Փորձը ցոյց է տւել որ ամբողջ Ղարաքիլիսան մինչև իսկ  
մեղանոց կարելի է դարձնել, և ամենուրեք հեշտութեամբ լի վաճառ հա-  
նել Ղարաքիլիսի պատականագոյն մեղրը: Նոյն իսկ երկրագործութիւնը  
ալնչափ ողբալի գրութեան մէջ չէր լինիլ, եթէ, գէթ հարեան Ղալաղ գիւղի  
օրինակին հետեւելով, ջան տալին հողին և հող տանէին ջրանցքների անցկա-  
ցնելու, գաշտերը կանոնաւորապէս ջրելու համար: Ատարեալ լանցանք է,  
մի ալսալիսի ջրառատ երկրում արտերը խորշակահար անել: Թորդորում ենք  
որ Ղարաքիլիսան սթալիւի և արժանապէս օգտւի բնութեան պարզենե-  
րից և խնդիր հեռաւոր ասպագալին չձգի:

## II

Ժողովրդի մէջ ոչինչ աւանդութիւն գորութիւն չունի գիւղի հիմնելու ժամանակի և նախկին անւան մասին. բայց որ հնումն ևս եղել է նա, դրան ապացոյց կարող են լինել հնագոյն գերեզմանները, խաչքարերը և պեղումների ժամանակ չափազանց զանազան անշնչան հնութիւնները: Փամբակը ընդհանրապէս աղքատ է հնութիւններով և հնադարեան վանքերով: Երեսով է հնումն ևս մի լետ ընկած դաւառ է եղել. նա չէ ունեցել ոչ մի պատմական անձնաւորութիւն. աղքատ տեղի չեն ունեցել պատմական նշանաւոր անցքեր. այդ իսկ պատճառով պատմութեան մէջ շատ քիչ է լիշատակուած Պէտք է ենթադրել որ Ղարաքիլիսան ևս հնումն մի անշնչան գիւղ է եղել. ներկայ անունը ստացել է նա, բլրակի վրայ ամրոց-ջուլին սև քարից կառուցած փոքրաղիւր եկեղեցուց, որ քսանական թվերում սաստիկ երկրաշարժից քանդու է. իսկ բնակիչները Հասան խանի հրոսակների կատաղի չարձակմանց ենթարկելով, լուռ քարերի և ալերերի մէջ ապաստան են գտել ցվերականգումն խաղաղութեան: «Վէրք Հապատանին» մի քանի երես է նւերում այդ աղետալ անցքին և գիւղի աւերմանը ընդհանրապէս:

Երեսանեան նահանգապետ գեներալ Ֆրեդէն աչ տարի ակցելով մեր գաւառը, շատ հաւանել էր Ղարաքիլիսի գիրքն ու կլիման, և կարծիք էր չափեն, որ նահանգական դիւանատունը առաւել նպատակաւարմար կը լինէր ամարալին սեզոնում տեղափոխել Ղարաքիլիսա քան Ռարաչիլազ, իսկ նախկին նշանաւոր և չափնի նահանգապետներից մին գեներալ Կարմալին, Ղարաքիլիսալի վրայ սիրահարած, գրեթէ անտեղ էր անցնում ամարալին ամիսները, ընտանիքով հանդերձ:

1886 թ. վերջերում կազմած ընտանեկան ցուցակին համաձայն գիւղը բաղկանում է 380 տանից, զուտ հայկական տարրով. ար. 1420, իղ. 1266=2686 հոգի. իսկ քահանաների սոցն տարւալ օգոստոսին կազմած ցուցակին նախելով՝ արականների թիւն է 1613, և իղ. 1470=3083 հոգի. հետեապէս վերջին 7 տարւալ ընթացքում բնակիչների աճելութիւնը մօտաւորապէս 400-ի է հասնում. իսկ տարեկան՝ միջին թւով մօտ 60-ի: Բացառական երևութ է 1889 թիւը, երբ ծաղկի համաճարակման ժամանակ բնակիչների թիւը հինգով միայն աւելացած է, և այն բացառապէս իգական սեռից: Ի դէպ, անցեալ տարւալ խոլերակի համաճարակման ժամանակ 25 դահր ունեցանք. և զարմանալին այն է որ ոչ մի կապ, ոչ մի չարաբերութիւն ունեցող, միմեանցից զգալի տարածութեամբ հեռու տնկրում. մի տանից երկու զոհ ունեցանք, չնայելով մինչև իսկ անզոյւ վարմանց, ինչով արդիօք պէտք է բացատրել այս երևութը. պարզ է միայն այն՝ որ բոլոր զոհերը աղքատ տներէր և վատ պայմանների տակ ապրող մարդիկ էին:



Բնակիչների մեծամասնութիւնը բնիկներ են համարուում, կան գաղթականներ զլխաւորապէս Ալբարատից և մասամբ Սիւնեաց աշխարհից, որոնց գաղթականութեան թւականը մթութեան մէջ թաղւած է։ Կան նաև 1830 թվի Կարինի մեծ գաղթականութեան մնացորդներից, որոնք սկզբում ստաբ թաղ են կազմել գիւղի մէջ. բայց ինչ-ինչ հանգամանքներից հարկադրւած՝ մեծամասնութիւնը գաղթել է Ալեքսանդրապոլ. իսկ մնացածները, ոչ աւելի քան 80 տուն, տասնեակ տարիների ընթացքում տիրապետող տարրի ազդեցութեան ենթարկւելով, ներկայումս ոչնչով չեն տարբերւում բնիկներից ընտանեկան կեանքով, նիստ ու կացով, հագուստով, սովորութիւններով և բարբառով, որ շատ մօտ է Ալբարատեան բարբառին, թէև մասամբ իր առանձնապատկութիւններն ու ձևերն ունի։

Ժողովուրդը ըստ երևութին հանգարտաբար՝ բնաւորութիւն ունի. խոշոր անկարգութիւնների, խռովութիւնների հազադէպ են. սակայն ներս թափանցիւր նրա հոգեկան աշխարհը, լաւ ուսումնասիրելի նրա կեանքը, և դու ցաւելով կընկատես նրա բարոյական մնանկութիւնը։ Յալտնի է որ մեծ ճանապարհների վրայ դառնած գիւղերը, ալլևալ արտաքին հանգամանքների ազդեցութեան տակ կորցնելով իրանց կեանքի ու բնաւորութեան պարզութիւնը, առհասարակ տխուր պատկեր են ներկայացնում բարոյական տեսակէտից. նա մանաւանդ եթէ ալլ աննպատ հանգամանքների հետ միանում է հնրթական անկումը, Գժըաղաբար Ղարաքիլիսան ևս դրանց կարգին է պատկանում։ Առանց դիմակի գրեթէ ոչ ոքի չէք պատահիլ. կեղծաւորել, չողոքորթել, երկչոտութեամբ ծածկել իր զգացմունքները, մտածմունքները, խորին լուրթիւն պահպանել անիրաւութեանց դէմ, գրկածին չպաշտպանել ազահ հարուստի դէմ՝ առաքինութիւն, խոհեմութիւն է համարում։ Խորամանկութիւն, խաբէութիւն, խարդախութիւն, անհաւատարմութիւն — նոյնպէս չարղելի տեղ ունին բոնած ժողովրդական կեանքում։

Ժողովուրդը ընդհանրապէս՝ թմրած ժողովուրդ է, գլուխը կորցրած, լուսահատ մարդու պատկեր է ներկայացնում. նրան պակասում է կենդանութիւն, եռանդ, ժրջանութիւն. պակասում է ուժ՝ կեանքի խոշորոտներին դիմադրելու Գուցէ սխալւում ենք. բայց և ալնպէս կարծում ենք, որ «գիւթ» հացի գործածութիւնը թերեւ մասամբ իր քլեասակար հետքերը թողած լինի բնակիչների ուղեղի վրայ։ Թուլ է նրանում նոյնպէս և ինքնապաշտպանութեան գաղափարը. զուրկ է նա իր շահերն ու իրաւունքները պաշտպանելու ընդունակութիւնից. ոչ միայն թուրք աւաղակը, այլ և գիւղական պաշտօնեան միատեսակ հարստահարում է նրան, օգտւելով նրա դատապարտելի անհոգութիւնից։ Թուրքը սարսափում է անգամ մտածել մալականի տաւարը դողանալ, համոզւած լինելով թէ ինչ կտրուկ դատաստան է սպասում իրան, առանց ալլ և ալլութեան. նոյն թուրքը հաստատ դիտէ որ Ղարաքիլիսեցին անվտիւ է, եռանդուն միջոց-

ները չի դիմիլ նրան հալածելու և ահա նա լաճախակի, առանց ոչոք գործ դնելու, անարգել քշում, տանում է նրա ձին ու կովը, եղն ու գոմեշը, որ կամ անտէր, անտիրական բրախած է կամ բոլորովին անփորձ պատանիները հսկողութեան լանձնած: Ղարաքիլիսեցին կարծում է որ ահա դարումն ենք ապրում, երբ գալլն ու գառը ի միասին էին արածում: Հըսկողութիւնը անչափ թույլ է որ լաճախ մի զուգ տրեխը, մի շափուր խորովածը բաւական է լինում ստիպելու թուրքին՝ Ղարաքիլիսեցու կովը մորթել, իրան հարկաւորը վերցնել, մնացած մեծագոյն լասը զազանների, թռչունների կերակուր թողնել: Բայց թուրքը չէ միայն. նոյն իսկ գիւղացիք կարծես ճիգն են թափում սիստեմատիքաբար միմեանց կործանել, միմեանց սնանկացնել, նման օրինակ վարւում է երբեմն հարեանը հարեւանի հետ, նրա կովը մորթելով, պարտիզի ծառերը կտրտելով, խոտի դեղերը ալրելով, անարգ վրէժառութեան ծարաւը լազեցնելու համար: Երբեմն էլ վող կորզելու մտքով, լանկարծ անլաւտանում է հարեանի եղը իր ծանօթ թուրքի ձեռքով. աշունհետե կոկորդիլոսի արցունքը աչքերում, տասնանոցը գրպանում, սար ու ձոր է ընկնում... հարեանի համար գլուխը հազար ու մի վտանգի ենթարկելով... վերջապէս գտնում, վերադարձնում է նրան իր եղը: Կեցցէ սրտացաւ հարեանը:

Ահա խոտ հուճճն ընկաւ. «հարան-տարան» էլ պոչից կպած. անպատմելի իրարանցումն. կարգ, կանոն, իրաւունք, հաւասար հողարածանութիւն, Աստուած տալ. կարծես Հասան խանի դարումն ենք ապրում. «ով չուտ» նա կուշտ». մէկը՝ մի քանի տասնեակ սալ խոտ կը հնձի, միւսը՝ նրա խեղճ դրացին կիսի կէսին էլ հասարակ կը մնայ: Խոտագողութիւնն էլ լսո՞ւ Աստուած ազատէ. ոչ ոք չուի չունի թէ ալսուալ հընձած խոտը վաղը կարող է իր տեղում գտնուլ. ալք իսկ պատճառով լաճախ ստիպած են առաւել կարեւոր գործերը, անգամ հասած արտերը, երեսի վրայ թողնել և շտապել հնձած խոտը մի կերպ տուն հասցնել: Իսկ թէ ցանքերին ուրջան մշտաներ են հասցնում տրորելով, ուտացնելով. մեծ ու փոքր սրիկաները երբեմն ուրպիսի լանդուգն արշաւանք են սկսում ալգիներին, բանջարանոցների և մեղանոցների վրա, ալք արդէն աննկարագրելի է: Եւ ալս ամենը կատարւում է անպատիժ կերպով, շատ անգամ լուս ցերեկով, Վալ ալս հասարակութեան, որի մէջ աղչափ թույլ է ինքնապաշտպանութեան գաղափարը. մուլ ապագալ է սպասում մեր ժողովրդին: Եթէ այս տխուր իրողութիւնները լաճախակի կրկնող երևութիւններ չլինէին, ալ պատահական, հարկաւ չարժէր ուշադրութիւն դարձնել: Իւրաքանչիւր տարի առեւադն, հարիւր տաւար անհետք կորցնել աւելի քան 2000 ր. արժողութեամբ, զկալի հարւած է, առանց ահն էլ թշուառ ժողովրդի համար: Աւելացրէք սրա վրա տանու գողերի և սրիկաների հասցրած ահագին մշտաները, որոնք հանգամանքներից օգտուելով հետզհետէ



ընդլայնում են իրենց շրջանն ու գործունեությունը, ալն ժամանակ պատկերը արդէն կատարեալ կը լինի:

Բայց խնդիր է թէ ինչ է անում շինական վարչությունը, Գիւղական բնֆորմների գոյություն օրից ցարդ՝ Ղարաքիլիսան լաջողությունն չէ ունեցել տանուտէրերի ընտրութեան մէջ. միշտ անարժան, անընդունակ մարդիկ վարչական դեկը իրենց ձեռքում ունենալով իրենց ետևից մի-միալն տխուր վիշտակներ են թողել: Նրանք կամ կաշառակերներ և ճարպիկութեամբ հասարակական գումարներ հալեցնողներ են եղել, կամ վարչական տաղանդից զուրկ, փառամոլ, նենգամիտ մարդիկ, որոնց համար քաղցր է իշխանական զաւազանը իրենց ձեռքում ունենալ, լատկապէս հակառակորդներին, վաշինի վիշտաբանութեամբ և կատաղութեան փրփուրը բերանում, մահակի հարածներով լռեցնելու համար: Միշտ լեռ են մղել փոքր իշատէ գողծողները, առաջ են սողացել պղտոր ջրում ձուկ որսացողները. բայց թէ ինչ միջոցներով, չարժէ ալք մատին ժամավաճառ լինել: Ամբոխին մոլորեցնել դիւրին գործ է: Ասում են միալն, որ այս տարւալ ընտրութիւնները որպէս թէ լաջող են. բայց թերահաւատութիւնը ալնալէս է մեղ տիրած, որ զժաւարանում ենք հաւատալ. կանխակալ կարծիքներից պէտք է զգուշանալ. դեռ պէտք է սպասել և նորերի գործերը տեսնել: Նորեր ենք ասում, որովհետև շարունակ քառորդ դար գործողներին (Ասուած գործող համարի) վերջապէս կարողացան լեռ մղել: Բոյոր պաշտօնեաները հաստատած են բացի տանուտէրից, որի հաստատութիւնը քարին-կապանին դէմ է ընկել: Հները չեն կարողանում մարտել որ հակառակ մարդ է ընտրած և, բացարձակ գործելու հնարաւորութիւն չունենալով, պատիւ են համարում իրենց համար՝ հնադարեան փլատակների տակից խալտաճամով գործեր գտնել, նորընտիր տանուտէրերին տապալելու, և զարմանալի չէ, եթէ լաջողութիւն գտնեն. իրաւունքը հզօրի կողմն է:

### III

Աննախանձելի դրութեան մէջ է և ընտանեկան կեանքը:

Վերջին պատերազմի ժամանակ և ալն տարիներում, երբ Ղարաքիլիսում գտնուած էր ղինւորական հիւանդանոց և բազմաթիւ զօրք, ժողովուրդը իրեն նիւթական բարւոք դրութեան մէջ տեսնելով, բոլակական լաջողութիւնից լափշտակւած, միանգամից «հրաժարիմք» կարդաց նահապետական պարզ կեանքին: Մաշիկը՝ եւրոպական կոշիկ դարձաւ, շիւէ շապիկը՝ սպիտակ քաթան, հասարակ վերնազգեստը՝ թաւիչ, մետաքս, տիւրնուր, հովանոց... Թանէ ուպասը՝ սուրճ և թէլ, պղնձեալ ամանները՝ լախճապակեալ ափռէներ. դանակ-սպտառաքաղ, անձեռոցիկ, կիս-եւրոպական կահ-կարասներով, դահաւորակներով, արտասահմանեան աթոռներով, տե-

դակն թանկագին գորգերով, վարագույրներով, մինչև խակ եւրոպական ծաղիկներով զարդարած սենեակներ... Մօղան վերջապէս վարակեց ամենին, և ին սերունդի չարուցած արգելքները խորտակելով, խրոխտաւով առաջ ընթացաւ Բալց, «աւազ փառացս անցաւորի»։ անցնալի քաղցր լիշտակներից ալօր շատ քիչ բան է մնացել, Հեղեղի բերածը, կրկին հեղեղը սրբեց, տարաւ, իրեն ժառանգորդ թողնելով միմիայն բարդ պահանջներով լի մի կեանք։ անքնական ցալտումը, կեանքի չանկարծուտ կերպարանափոխութիւնը իր կորստաբեր հետեանքներն ունեցաւ Նիւթական աղբիւրների նւագելով, իսպառ ցամաքեց և ընտանեկան հասկարաշխութիւնը, փոխադարձ սէրը, միութիւնը, պարտաճանաչութիւնը, տան մէջ երևան եկան անզուսպ կամաչականութիւն, անիշխանութիւն, զժողութիւններ, անվերջ խռովութիւններ, անհաւասարութիւն հագուստի, անհաւասարութիւն ուտել-խմելու մէջ։ միմեանցից ծածկել, միմեանցից լափշտակել սովորական երևութիւնների կարգն անցան, ձարալիկ, դօրեղ եղբարւր ճնշեց խեղճ, թուլ եղբօրը, իւղոտ պատանները իրեն սեպականեց, ընդ սմին ոչ սակաւ դեր կատարեց, այս տխուր երևութիւնների մէջ, և համատարալ սեռը, Նւ ալսպէս, հեռ, նախանձ, ատելութիւն, չկամութիւն և ալ բարոյական մոլութիւններ, իրենց ահռելի գլուխը բարձրացնելով, հիւքից տապալեցին նահապետական մեծ օջաղները, և ահագին հարած հասցրին, առաւելապէս երկրագործ դասակարգին։

Եթէ անցնալից մի միութարական բան կ'սկսէ, ալդ ալն է միայն, որ գլխաւորապէս զինտրականների շնորհիւ, վերջին տասնեակ տարիներում, գիւղը զգալի փոփոխութիւնների է ենթարկած շինութիւնների կողմից, ընդհանուր ձգտումն է նկատուում ազատել ասիական բնակարաններից, խոնաւ, գետնափոր խրճիթներից։ Ալթմ բաւականաչափ վալելուչ, հոլակալ շինութիւններ կան։ մինչև խակ երկարկանի, կղմնդրեալ և թիթեղեալ տանիքներով, Բալց ալդ բաւական ճաշակով շինած բնակարանները գլուղին մի առանձին փալլ, գեղեցկութիւն չնո տալիս ցիր ու ցան, ծուռ ու մուռ դասաւորութիւնից, փողոցների անկանոնութիւնից, Կանոնաւոր փողոցների ունենալու պահանջ՝ ժողովուրդը ոչ միայն դեռ չէ զգում, ալ եղածներն էլ պահպանելու անպիտի է։ շուալութիւն է համարուում լալն փողոցների ունենալ։ լաճախ կարելի է ակնհայտես լինել թի ինչպէս տան բազերն ու ալ շինութիւններ մեծացնում, լալնացնում են 'ի վնաս փողոցների։ Գիւղական վարչութեան գործունէութիւնը այս կէտում ևս միանգամայն զրօի է հաւասար։ Միևնուր ժամանակ ստիպւած ենք ապրել առողջապահական վատ պայմանների տակ։ Գիւղի, փողոցների, բազերի մաքրութիւնը երկրորդական-երրորդական տեղն է բռնում և գլխովին անտես է առնուում։ Վանաձորի հրաշալի գետակի մի ճիւղը, որ անցնում է գիւղի միջից, անմաքրասէր ժողովուրդը ընդ միշտ համակելով աղ-



բիւթի, թրիքի կոտորում, ոչ միայն բոլորովին անպետք է դարձնում գործածութեան համար, այլ և օգը վարակում միազմեցրով, փողոցի առակը մտադործները մշտապէս ներկում են ոչխարների արիւնով, ներկարարները իրենց կարասների դարչաճոտ մնացորդներով, ինչպէս ամենուրեք, ալտեղ ևս շինական վարչութիւնը ընդ միշտ վալլում է իր դատապարտելի անհողութեամբ:

Շնորհալի, նրբաճաշակ տանտիրիկիներն ըստակալութիւնից (սակաւ բացառութիւններ), ցանկալի չափով ներքին բարեկարգութիւն, մաքրութիւն չէ նկատում նոյն իսկ բնակարանների ներսը: Ընտանեկան իրեղենների, կահ-կարասիքի անկարգ, անճաշակ դասաւորութիւն, փոշիի թանձր շերտեր, սարգի ոտտալն լուսամուտներում, անկիւններում, անմաքրութիւնից տախտակամածը սևացած, ապակիները թափանցիկութիւնը կորցրած, թանձր հեղձուցիչ օդ, երբեմն դարչաճոտութիւն, ահա բնակարանների մեծ մասի ներքին բարեկարգութիւնը: Անտանելի է, նամանաւանդ ննջեցեալի տունը, ուր կանաչ, գրեթէ ձկան նման միմեանց վրա դարսւած՝ ժամերով չըջալում են դադաղը, տունը դառնում է մի տեսակ հոդ, ուր թթւածնի պակասութիւնից կարելի է չնշասպառ լինել: Աւելորդ է ասել, որ չալտնի տօն օրերում ընտանեկան հանդէսների և հիւրասիրութեան ժամանակ նկատելի մաքրութիւնը, տան մէջ մշտապէս բնակւողների համար, մի առանձին նշանակութիւն չունի: Հին հացատները բաց երթիկներով, իրենց բոլոր անպարմարութիւններով հանդերձ, առավել լաւ պալմանների մէջ էին դրւած վեհալ լաւ ցիւցիւղի կողմից, քան ներկայ գորդերով դարգարած, շատ սենեակներ,

Սակաւն անիրաւութիւն կը լինէր ասել, որ զարաքիլիսեցի կինը ծով է և անգործ. ընդհակառակ ամբողջ օրը նա զբաղւած է. զգում, մանում, ներկում, գործում և պատական կապերոտ-խալիներ է պատրաստում, որ մի լալտնի չափով նրբութեան և կատարելագործութեան է հասցրել. աղ մասում նա ալնքան հօշակ ունի, որ մինչև իսկ հեռւոր քաղաքներից պատէրներ է տանում:

Ալրի կանաչ կան, որժառանգ մեղի նման մանելով, գործելով, լայարարութեամբ և հացթուխութեամբ տուն են պահում, որքեր են մեծացնում: Կանաչ կան որ մալխից—հոկտեմբեր, սրանից, նրանից բաղմաթիւ կովեր վերցրած, սարերում իւղ ու պանիր են պատրաստում, իւրաքանչիւր կովին մի բուրլի վարձ սօսանալով. պալմանաւորւածը (կովին 1 փ. իւղ, 2 փ. պանիր) տիրովը հասցնելով, իրենց համար ևս կարողանում են իւղ ու պանիր տնտեսել դէթ ձմեռւալ համար: Սակաւն ալս բոլոր արժանիքներով հանդերձ, սակաւ բացառութեամբ, անխլով են տան մէջ պատշաճաւոր մաքրութիւն և բարեկարգութիւն պահպանելու համար: Եթէ մաքրասիրութեան ճաշակը ցանկալի չափով նրանցում զարգացած

լինէր և դրանից առաջացած բարիքները մատչելի լինէին նրանց մտաւոր ընդունակութիւններին, անկասկած, դրա համար նոյնպէս ժամանակ կը գտնէին նրանք: Ընդ սմին դեռ շատ բան է պակասում նրանց, նա և համով-հոտով կերակուր եփելը: Նոյնը չէ կարելի ասել հագուստի, սպիտակեղէնի մասին. աչդտեղ, մոդալի ազդեցութեան տակ, փոքր ի շատէ երևում է թէ ճաշակ և թէ մաքրութիւն. սապոնի գործածութիւնը հետզհետէ մեծ չափեր է ստանում: Խօսելով մաքրութեան մասին, չէ կարելի լռութեամբ անցնել, որ գիւղում դեռ մի հատիկ բաղանիք չկալ, կար՛ երբ զինւորներ կալին, վերջացաւ՝ երբ նրանք տեղափոխւեցին. հետեապէս ժողովուրդը դեռ չէ զգում դրա անհրաժեշտութիւնը:

Ընտանեկան հանդէսներ—նշանադրութիւն, հարսանիք և ալլն ընդհանրապէս չափաւորութեան դրոշմ են կրում իրանց վրայ աննշան բացառութեամբ. և եթէ աւելորդութիւններ թույլ են տրուում, դրանում պարտական ենք՝ սովորութիւնների ստրուկ՝ կանանց, Տուր և առ ալլ ևս գոլութիւն չունի. չեն պատահում և անչափահաս ամուսնութիւններ. 10 տարի առաջ 16 տարեկան աղջիկը պառաւնների կարգումն էր համարւում և փոքր անհանգստութիւն չէր պատճառում ծնողներին. ալժմ զգալի կերպով ժամանակները փոխւել են. 20 տարեկան աղջիկներ դեռ ևս հայրենական լարկի տակ են գտնւում. կարճատև է առհասարակ նշանադրութեան և ամուսնութեան ժամանակամիջոցը. չաճախ մի քանի շաբաթ միաշնչ, Հարսանիքը, որ տեղի է ունենում ձմեռալին ամիսներում, տևում է երեք օր, ըստ հնաւանդ սովորութեան: Ընդհանրապէս սկսում, վերջանում է պաս (?) օրով: Մետաքսեղէնը վերանալու վրայ է. դրան փոխարինում են հետզհետէ շալեղէն-կտորներ. Հարսանիքի առաջի երեկոյեան, հին սոսովորութեան համեմատ, բարեկամները մեքաքսեալ կամ հասարակ թաշկինակներ են նւիրում փեսայացւին, որ ուսպանկ (թիւս ուսկապ) անուն է կրում. նախապէս պարում են օրիորդները ուսպանկը ձեռքերում, և ապա փեսայացւի վզից կախում—աջ ու ձախ, որ բազմապատկութեան նշանի նման մի բան է դուրս գալիս: Դեռ ևս գոլութիւն ունի և «խալթ» անւանեալ ընծալարերութիւնը մեծ մասամբ դրամով, պսակադրութիւնից լեռող փեսայի տան առաջ. Ալլ ընծան ալլապէս կոչւում է և «փոխ հաց». փեսան ապագայում նոյնանման հանդիսի ժամանակ իւրաքանչիւրին պարտաւոր է վերադարձնել, գրեթէ ստացած չափով: Նորահարսի օժիտը ընդհանրապէս պարզ է և հասարակ. անկողին, մի քանի, մեծ մասամբ չթեալ հագուստ, մեծ ու փոքր մնդով և ալլ ընտանեկան մանր իրեղէններ: Դրանից աւելին և արծաթեղէն միամիջն մի քանի հարուստներին է վերապահւած, որոնք և չափաւորութեան սահմանից անցնելով՝ հարսանիքի հանդիսի ժամանակ չապլ և անտեղի ծախսեր են անում: Ի պատիւ Ղարաքիլիսեցիների պէտք է ասել, որ բոլոր հանդէս-



ներում, ընդհանրապէս, խմիչքի դորձածութիւնը անշահն է և հափաւոր. գիւղում հարեցողներ չկան. սակաւաթիւ են և օխողները, Բալց ի նախատինս երիտասարդները մի չալտնի շրջանի—կոնծաբանութիւնը, ընդ նմին և թղթախաղութիւնը, թերեւս ներմուծած տեսնենք մի օր, և մեր կեանքում:

Ժողովրդական զբօսանքներ բուն մտքով չկան: Համբարձման ատնը միալն, ինչպէս և շատ տեղեր, մի տեսակ ժողովրդական զբօսանքի բնաւորութիւն է կրում իր վրայ: Նախընթաց օրը, ճաշից չետոյ, մանուկներ, դպրոցի սաներ, սանուհիներ, նորատի օրիորդներ, նորահարսներ, կանաչք դաշտ են դուրս գնում և երփներանգ ծաղիկներից վնջեր կաղմնելով, վաղ առաւօտեան մանուկները շրջեցնում են գիւղում և ուտելեղէն, զրամ ժողովելով, դաշտում, անտառի ստորոտներում, ստւերախիտ ծառերի տակ համեստ ճաշեր են սարքում: Կանաչք օրիորդների հետ խալտաճամուկ հագնւած խումբ-խումբ դաշտ են դուրս գնում, աղպէս և երիտասարդները, որոնք և հեռւից միալն գիտում են նորահարսների, օրիորդների պարերգին, ջան-գիւլումներին, աղպալին երգերին, որ տեսւմ է դրեթէ ամբողջ օրը: Վիճակ հանելու սովորութիւնը անհետացած պէտք է համարել:

Մի տեսակ ժողովրդական զբօսանք պէտք է համարել նույնպէս՝ գիւղից 4 վերստ հեռաւորութեան վրայ գտնւած ս. Կիրակի ուխտատեղին չաճախելը, որ գտնւում է անտառախիտ ձորակում, մի հրաշագեղ գետակի եղերքում: Զատիկից սկսած մինչև խոր աշուն, գրեթէ ամեն կիրակի, մաղնիսական զօրութեամբ, քարչում է ժողովրդին դէպի ինքը, ալզ սրբավայրը, որի կատաղի սիրահարը փափկասուն սեռն է: Հասկանալի է թէ ինչ բարերար, կազդուրիչ ազդեցութիւն կարող են գործել քնութեան հրաշալիքներով զարդարւած վայրերը, փակւած՝ անշարժութեան դատապարտւած կեանքի վրայ: Ս. Կիրակի գետակը մեր սրբազան փոքրիկ Գանգեսն է, որի բարիքներից սուկի գեղեցիկ սեռը՝ գիտէ օգտուել, առանց համեստութեան դէմ մեղանշելու, մենատր և ստւերախիտ վայրերում, ուր փոքրիկ ջրընկեցներ են կաղմուտ: Աշունհետե խաղաղ բնութեան ծոցում, ստւերախիտ ծառի տակ, դալար խոտի վրայ համեստ ճաշ, սրբան համեղ, սրբան հրապուրիչ է... Աչդտեղ տեղի չեն ունենում այն ալանդակ, անբարոյական պատկերները, որոնք սովորական են մեծ ուխտատեղիներում, Հեռու չգնանք. Վերափոխման տօնին, մեր եկեղեցու տօնն է: Լոռու և Փամբակի գիւղերից ահագին բաղմութիւն է ժողովուում. ալպտեղ, ամեն քաղաքում դուք կը պատահէք զգացմունքներ վիրաւորող տեսարանների միալն:

## IV

Բնակիչները աւելի պնդակազմ, լաղիմանդամ, դւարթաղէմ, գեղեցկատեսիլ պէտք է լինէին, աւելի երկարակեաց. բայց բաւական չէ առողջարար կլիման միայն. չարքաշ կեանքի աննպաստ հանգամանքները, որոնցով շրջապատւած է զարաքիլիսեցին, թող չեն տալիս նրան արժանապէս օգտւել կլիմական բարեւոյնը պայմաններից: Նա խուլ է գեղածիժադ բնութեան ձայնին. ոչ թռչունի երգ, ոչ կանաչազարդ դաշտ ու հովիտ, ոչ արծաթափայլ սառնորակ աղբիւր, անկարող են գրաւել, հետաքրքրել ալն մարդուն, որի ստամոքսը դատարկ է, որի սիրտը մաշում է ընտանիքի հոգսը, որը չգիտէ ինչով պէտք է ապրի ալսօր և ծանր զգացմունքներով է սպասում վաղէան: Եղեմն իսկ կը կորցնի իր գրաւչութիւնը վըշտահար, լուսահատ սրտի առաջ: Արաքիլիսեցին ցանում է, բայց զրութէ չէ հնձում. նրա ամբարները դատարկ են մնում միշտ. ջլախ անգամ պարկ է դառել. նա կով է մեծացնում, բայց կաթն ու մածոնը՝ ոչ իր երեխան, այլ թուրքի լամուկն է լափում. նա դառը քրտինք է թափում, դատարկապորտ վաշխառուն է վալելում. նա՝ պանդխտութեան դաւադանը ձեռքին թափառում է փոստալին իջևանների անբարոյական մթնոլորտում, եւ մէջէիկի, ստարոստ աչի պաշտօններում մաշում է իր կեանքը, ոչ իր տնտեսական քալքաւած դրութիւնը բարոյքելու, այլ վամպիր-վաշխառւի անլազ կողորդը լաղեցնելու... Միթէ սրանից աւելի թշւառ վիճակ կարող է լինել գիւղացու համար Մասամբ բաժանութիւնը, մասամբ 80 թականների վերջին՝ միմեանց չաջորդող անջնոց տարիները, նիւթական անկման հասցրին ժողովրդին. հացի թանգութիւնը, հրեշաւոր պարաքերի հետ միացած, մահացու հարւած տվին նրան. ալսօր նա օրական ցամաք հացն անգամ ամենամեծ դժւարութեամբ է կարողանում հասցնել իր խեղճ ընտանիքին: Նրնակալել անգամ դժւար է ալն ընտանիքների դրութիւնը, որոնք աշխատող ձեռքերից բոլորովին զուրկ, պատառ հացի կարօտ են: Մարդ՝ մինչև ոսկրները սարսուռ է զգում մտնելով ալդ թշւառների, խոնաւութիւնից բորբոսնած, մռալ խրճիթները. կեանքը իր բոլոր դառնութիւններով թագաւորում է ալդտեղ, որի մասին զաղափար կաղմնու համար հարկաւոր է միայն ականատես լինել: Բայց ո՞ր բաղդաւոր մահկանացուն կը բարեհաճի ցած իջնել իր բարձրութիւնից և ալցելել ալդ ստոր, զգւելի վալքերը:

Անճար, աշխատող ձեռքերից զուրկ ընտանիքներին նպաստելու հաշար ընկերութիւն կազմելու փորձը ցարդ ապարդիւն անցաւ տիպաւած են մուրալ. դրանց թւում նկատելի են անգամ կանաչք, որ չափազանց խորթ և չտեսնւած բան է մեր կեանքում: Անհնարին է նկարագրել ալն վալրկեանը, երբ ամօթխած հալունին անվտաճ քալքերով մօտենում է ալս ու ալն դաշն և անհամարձակ պարզում է իր ոսկրացած ձեռքը, սո-



մատանջ մանուկներին մի կերպ կերակրելու համար Աւետարանի մարդասիրական դադափարները մեզ համար չեն, և մեզ անհասկանալի է ամուքել անճարների տխուր վիճակը առանց վիրավորանք հասցնելու մարդկային արժանապատուութեան: Բայց հորիզոնի ծալրին կարծես մի լուսոյ ատող է երևում: Նախիջեանի արակալ փոստապահ՝ պ. Պետրոս Վարհանեան, մի ամիս առաջ այցելելով իր հարկւնի դիւղը և ծանօթանալով դիւղի դրութեան հետ, մի հարիւր բուբլի նւիրեց, անճար ընտանիքների օգտին ֆոնդ կազմելու, ընդ նմին հանդանակութիւն խոստանալով իր շրջանում, նոյն նպատակի համար Հարիւր բուբլի հարկաւ մի կաթիլ ջուր է թշուառութեան ուղիւնոստում: Դեռ սղասում ենք, որ այդ բարի օրինակը արձագանք գտնի մեր ունեւորների սրտում: Թէ առ ալժմ չվրդովենք նրանց բաղդաւոր կեանքը տխուր պատկերներով...

Նախանձելի չէ և վաճառականների դրութիւնը. քանի զօրք կար, իրաւունք ունէին դո՛ւ լինելու իրենց վիճակից. ալժմ փողոցում անշարժութիւն, մեռելութիւն է տիրում: Ինչպէս երկրագործների, աշնպէս և վաճառականների մէջ բաղդաւորների թիւը աննշան է: Զօրքի բացակայութիւնը զգալի կերպով ազդեց ամեն դասակարգի վրա: Սենեակները դատարկ են, վարձող չկա: Գիւղացին ալ ևս իր խոտն ու դարմանը, հաւն ու ձիւր, կաթն ու մածոնը վաճող կերպով վաճառել չէ կարողանում, հազազիւտ են մինչև խի գնողներ:

Ինչպէս ամենուրեք, աշնպէս և մեղանում հարուստ դասակարգը փոքրամասնութիւն է կազմում, որոնք իրենց հարստութիւնը ձեռք են բերել արքունի կապալներում, առաւելապէս փոստապահութեան մէջ: Լոյկասի փոստալին ցանցը գրեթէ դրանց ձեռքումն է և ծառայողների մեծամասնութիւնը զարաքլիսեցիներ են: 4—5 անձեր (չհաշւելով չալտնի դրամատէր Թահիրեաններին) ունեն աւելի քան 100 հազար. կան և տասնեակ հազարից աւելի կամ պակաս ունեցողներ: Բայց հասարակական գործերով մեր կրեսոսները աչնքան են հետաքրքրում, որչափ չինաց կայսրը հալ ժողովրդով: Սակալն արդարութիւնը պահանջում է վշատակել ալտեղ, որ էր երբեմն, երբ դրանք բաւականաչափ հետաքրքրում էին հաւարակական, զարոցական և ալ հանրաշահ գործերով: և այդ ալն ժամանակ, երբ նրանց գրպանները դեռ աչնքան էլ տուռ չէին, և ժողովուրդը ընդհանրապէս բարեկաջող պալմանների մէջ էր գտնւում: Բայց հէնց որ ժողովուրդը ընկաւ նիւթապէս, դրանք էլ կարծես պալմանաւորած, պլինդ՝ շատ պլինդ փակեցին իրենց գրպանները. և բաւաւել կարիք զգացւեց դրանց օգնութեան, աւելի քար-սիրտ դարձան և աղքատից՝ աղքատ ձեացան:

Բայց երանի թէ սրանով միայն բաւականալին և ժողովրդին հանդիստ թողնէին իր սև օրը լալու: Հաց չունի ժողովուրդը, ստիպած է

հազար ու մի տանջանքներ կրելով Ղազարի խորքերը հասնել և թաղարը 8 ր. գնել։ Ներկալ ծանր հանգամանքներում, սա ձեռնտու գին պէտք է համարել ժողովրդի համար Բալց ահա մեր դրամատէրերից մինը, զրդու նման հառնելով Ղազարի գիւղերը, միանգամից 10—12 ր. բարձրացրեց թաղարի գինը։ Յաւտնի է որ փալտավաճառութիւնն էլ ապրուստի մի աղբիւր է մեր ժողովրդի համար Բալց ալժմ նրան պատասխանում են, որ փալտ չկալ,—ս մե տ ա ն վերջացել է։ Դարձեալ մեր դրամատէրերից մինը, պալմանաւորած լինելով մի քանի հարիւր սաթէն փալտ հասցնել Ալէքսանդրապոլ, կարողացել է, անտառապետից ստացած տոմ. սակով, կառավարութիւնից թող տրւած վառելավաւոր իրեն սեպհակահել, ով է ժողովրդի վրա մտածում։ մինչև որ կրկին ս մե տ ա կը զալ։ ժողովրդի հոգին էլ կը թռչի, ձիւնը՝ սար ու ձոր կը բռնի։ Եւ այսպէս, մէկը Ղազարի ճանապարհը փակեց ժողովրդի առաջ, միւսը Ալէքսանդրապոլի։ Բալց չէ. սխալւեցալ. առաջինը իր ցորենները ժողովրդին բերել կը տալ, կրկնակի գնելով նրան վաճառելու, իսկ երկրորդը դարձեալ ժողովրդին կրել կը տալ իր փալտը Ալէքսանդրապոլ, իրեն համար ձեռնտու, իսկ ժողովրդի համար բոլորովին անձեռնտու պալմաններով։ Փողը, ալդ տեսակ պարոնները ձեռքում, ժողովրդին պատուհասելու մի գործիք է դարձել։ Սոյնանման քաջագործութիւնների առաջը, թերեւ կառավարութիւնը միաջն կարող է առնել, իր երկաթեալ դաւադանով. ժողովրդի դիմադրութեան բոլոր ուժերը սպառւած են <sup>1)</sup>։

## Վ

Վերջին խօսքս նւիրում եմ դպրոցներին և եկեղեցուն։

Գիւղն ունի երկսեռի դպրոցներ. արական դպրոցը հիմնւած է 1853 թ., ուրեմն քառասնամեալ հասակի մէջ է. օրիորդաց դպրոցը 1879 թ.ին է հիմնւած, և միակն է ամբողջ փամբակում։ Դպրոցները կառավարւում են եկեղեցական և դպրոցական 15000 ր. դրամագլխի տոկոսներով. ալդ գումարի մէջն է և պ. Ալէքսանդր Թահիրեանի 1878 թ. նւիրած 4000 ր., ստացւում է մօտաւորապէս նաև 500 ր. թոշակադրամ, ալ եկամուտները աննշան

<sup>1)</sup> Այո, քանի որ ալդ ժողովուրդը հէնց այդպէս էլ կը մնալ. Վերը մենք խմացանք թէ ալդ ժողովուրդը որքան բարոյապէս և ոչ միայն նիւթապէս ընկած է։ Այդպիսի ժողովուրդ ոչ ինքը բան կը ստեղծի, ոչ էլ ուժեղների հարստահարութեանը կընդիմադրի։ Բարոյապէս և մտաւորապէս բարեփոխւել է հարկաւոր մեր ժողովրդին, և դորա համար է որ մենք ալսքան ու ալսքան շեշտում ենք գիւղական-գիւղատնտեսական եւ ինքնակրթական խնդրի վրայ։



են, Դպրոցները միդասեան են և կառավարում են վեց արտօնաւոր ուսուցիչներով. բաժանմունքները առանձին դասարաններում են գետեղւած. տղաների թիւը 140-ի է հասնում, օրիորդացը՝ 70-ի. վերջինների թիւը տարեցտարի աճում է: Դպրոցները ունին մի ընդհանուր գրադարան, մօտ հազար գրքերով. գոհացուցիչ դրութեան մէջ է և ուսումնական պիտուքների վերարեւրմամբ: Դպրոցական չէնքերը արտաքին կողմից թէև անշուք, բայց ներսը և կահաւորութիւնը ընդհանրապէս բաւարար դրութեան մէջ է: Յիսկումն հալոց դպրոցների 1885 թւին առաւել նախանձելի վիճակի մէջ էին դպրոցները նիւթական և ուսումնական կողմից և աւանդում էին նաև դարգացուցիչ առարկաներ. ալժմ նախկին փալը չուներին: Այս մինչև որ ընդհանուր ժողովրդի նիւթականը չբարւոյրէր, որ մօտաւոր ապագայի գործ չէ, ներկայ դրութիւնից աւելին պահանջել զժաւար է: Դժաւրին է նոյնպէս, միդասեան դպրոցներով ժողովրդի ուշադրութիւնը գրաւել և ցանկալի լառաջադիմութիւն ցոյց տալ: Մեր կրեստները, առանց ոչինչ ներդրութիւն պատճառելու իրենց գրպանին, շատ լւա կարող էին ապահովել և բարձրացնել դպրոցների դրութիւնը, երկդասեան դարձնելով. բայց կանոն արդեօք. ապրենք ապագայի չուտով: Արդէն պատրաստ ունեմ դպրոցների պատմութիւնը, որ թերևս մի օր կարեւոր համարւի ի լոյս ընծայել. առ ալժմ ալսչափ միայն, որ դպրոցները, չնաչելով նկատելի թերութիւններին, ընդհանրապէս թողել են իրենց աղքատութիւնը ժողովրդական կիանքի վրա և տւել են ստաւր բազմութիւն գրագէտների. ընդ նմին պատրաստելով և մի երկտասարդութիւն, որ իր բարի ձգտումներով չուտալի ապագայ է խոտտանում:

Գիւղը երեք քահանաւ ունի. նիւթականին նաչելով՝ ալքքանն էլ շատ է: Նոքա գանդատում են, որ իրենց գլխաւոր արդիւնքը—տարահալը—կանոնաւոր չեն ստանում, և որ էջմիածնապատկան պտուղը, որ ժողովրդի պարտքն է, երբեմն իրանց գրպանից են վճարում:

Ղարաքիլիսի ժամատէր ժողովուրդը իրեն համապատշաճ եկեղեցի չունի. և՛ փոքր է, և՛ կենդրոնից հեռու, և՛ ըստ ամենաչնի վերանորոգութեան կարօտ. կաթիլքից ծիփերը թափւում են. քարեալ լատակի վրա խոռոչներ են կաղմւած. պատերի կամարների վրա նկարած անճաշակ պատկերները, մեծ մասամբ եղծւած և թանձր փոշի տակ ծածկւած լինելով՝ աւելի ևս ալանդակւել են. կարծես ումբակոծութեան ենթարկւած լինեն. արեգակի ճառագայթները հազիւ են ներս թափանցում. լատակը երկու աստիճան ցած լինելով գետնից, խոնաւութիւնը դգալի է. վերջապէս մռալ պատերը, անմաքուր գերեզմանատան տիւր պատկերը անախորժ տպաւորութիւն են գործում ալցելուի վրա: Վերանորոգութիւնը մի քանի հազար է պահանջում, խոտ ենք, որ մեր խոշոր գրամատները մինը, պ. փաշա Նզիգարեան, մտադրութիւն ունի իր հաշւով վերանորոգել

և, եթէ հնարաւոր է, փոքր ինչ մեծացնելու Յաջողութիւն ենք ցանկանում պարոնին, իր բարենպատակ մտադրութեան մէջ:

Այս մխիթարական լուրով վերջացնելով մեր համեստ նկատողութիւնները Ղարաքիլիսի վերաբերմամբ, հրաւիրում ենք հասարակութեան բանիմաց մասի լուրջ ուշադրութիւնը, մեր չօչափած կենսական, ամենակարեւոր, ընդ նմին և ծանրակշիռ հարցերի վրա: